



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

նոյեմբերի 2018 թվականի N°Ա
ք. Երևան

**«ՎԵՈՒԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2017 թվականի մարտի 29-ի N°102Ա որոշման 1-ին կետով սահմանված ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին նոր միացման կամ միացման փոփոխության գործընթացի իրականացման վերաբերյալ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից տեղեկատվության ներկայացման կարգի (այսուհետ՝ Կարգ) 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ եռամսյակային տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացվում մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը, իսկ 3-րդ կետի համաձայն՝ Տեղեկատվության ներկայացման վերաբերյալ Ընկերությունը մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը գրավոր ծանուցում է Հանձնաժողովին,

բ) 2018 թվականի երրորդ եռամսյակի՝ Կարգով սահմանված տեղեկատվությունը Ընկերությունը Հանձնաժողով է ներկայացրել սահմանված ժամկետից ուշ՝ 2018 թվականի հոկտեմբերի 25-ի փոխարեն 2018 թվականի հոկտեմբերի 27-ին,

գ) Ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին նոր միացման կամ միացման փոփոխության գործընթացի իրականացման վերաբերյալ 2018 թվականի 3-րդ եռամսյակի տեղեկատվությունը (այսուհետ՝ Տեղեկատվություն) չի պարունակում Կարգի N°3 հավելվածին համապատասխան ներկայացման ենթակա տվյալները,

դ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2018 թվականի նոյեմբերի 7-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական

վարույթ՝ վերջինիս կողմից Կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետով և 3-րդ կետով սահմանված ժամկետի խախտման, ինչպես նաև Կարգի №3 հավելվածին համապատասխան ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին ժամանակավոր բաժանորդների միացման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն չներկայացնելու փաստերի ուսումնասիրության նպատակով,

ե) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2018 թվականի նոյեմբերի 12-ի №30228 գրությամբ ներկայացրել է պարզաբանումներ առ այն, որ Տեղեկատվությունն ուշ ներկայացնելը պայմանավորված է Տեղեկատվության համար պատասխանատու աշխատակցի համակարգչի կոշտ սկավառակի խափանումով, իսկ Կարգի №3 հավելվածին համապատասխան տեղեկություն չներկայացնելը պայմանավորված է 2018 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում խմելու ջրի ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ժամանակավոր պայմանագիր կնքելու դիմումներ չստանալու հանգամանքով,

զ) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետը, 3-րդ և 4-րդ կետերի պահանջները, այն է՝ Տեղեկատվության ներկայացման ժամկետը և չի ներկայացրել Կարգի №3 հավելվածին համապատասխան տվյալները: Իսկ Ընկերության պատճառաբանությունները չեն կարող դիտվել որպես թույլ տրված խախտումների օբյեկտիվ պատճառներ և ազատել վերջինիս պատասխանատվությունից: Մասնավորապես, Ընկերության կողմից մատնանշված՝ ժամկետի խախտման վերաբերյալ հիմնավորումն ըստ էության աշխատանքի թերի կազմակերպման արդյունք է, իսկ խմելու ջրի ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ժամանակավոր պայմանագիր կնքելու դիմումներ չստանալու հանգամանքը հիմք չէ այդ մասին նշումներով Տեղեկատվությունը Հանձնաժողով չներկայացնելու համար ,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 2-րդ մասի 3-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը նախազգուշացնել՝ Կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետը, 3-րդ և 4-րդ կետերը խախտելու համար:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերության օրենքով սահմանված կարգով իրագրելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

Մ.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
նոյեմբերի 2018թ.